# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N1

## ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/2 պայմանագրի

**Ք. Արթիկ** **ութը հոկտեմբերի երկու հազար տասնյոթ թվականի**

<<Արթիկի համայնքապետարանը>>, ի դեմս համայնքի ղեկավար Մ. Վարագյանի, որը գործում է <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի և <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի քաղաքապետարանի աշխատակազմ>> համայնքային կառավարչական հիմնարկի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և <<Ույուտ Սենթր>> ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Լ. Հարությունյանի (այսուհետև՝ Կապալառու),որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից,(երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր) կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով Արթիկի համայնքապետարանի և << Ույուտ Սենթր >> ՍՊԸ-ի միջև 05.10.2017 թ.-ին կնքված ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի 8,5 կետը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/2 գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը՝ Կողմերը փաստեցին, որ << Ույուտ Սենթր >> ՍՊԸ-ն Արթիկի համայնքապետարանի և << Ույուտ Սենթր >> ՍՊԸ-ի միջև 05.10.2017 թ.-ին կնքված ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/ 2 գնման պայմանագրի շրջանակներում կատարել է հավելյալ աշխատանքներ, որոնք ներառված չեն եղել գնման պայմանագրի ծավալաթերթ-նախահաշվում: Մասնավորապես՝ հավելյալ կատարվել է բետոնե եզրաքարերի տեղադրում բետոնե հիմքի վրա 200x80 մմ չափերի 94/իննսունչորս/ գծամետրի չափով:

2. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Հիմք ընդունելով Արթիկի համայնքապետարանի և << Ույուտ Սենթր >> ՍՊԸ-ի միջև 05.10.2017 թ.-ին կնքված ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/2 գնման պայմանագրի 8,5 կետը, ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/2 գնման ընթացակարգի պատասխանատու ստորաբաժանման եզրակացությունը կողմերը որոշեցին Արթիկի համայնքապետարանի և << Ույուտ Սենթր >> ՍՊԸ-ի միջև 05.10.2017 թ.-ին կնքված ՇՄԱՔ-ԳՀԱՇՁԲ-17/ 2 գնման պայմանագրի գինը ավելացնել օրենքով թույլատրվող տաս տոկոսի չափով, հավելյալ աշխատանքների ֆինանսավորման նպատակով

2.2 Պայմանագրի նոր գինը սահմանվում է 3 685 400 /երեք միլիոն վեց հարյուր ութսունհինգ հազար չորս հարյուր/ դրամ

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն համաձայնագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

3.4 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ :

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| ՀՀ Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարան | Ույուտ Սենթր ՍՊԸ |
| Ք. Արթիկ, Ազատության հրպ. թիվ 1 | Ք.Արթիկ Աբովյան 22 |
| ՀՀ ՖՆ գործառնական վարչություն | Ինեկոբանկ |
| Հ/Հ 900202824019 | Գյումրի մ/ճ |
| ՀՎՀՀ 06101029 | Հ/Հ 2051222032481001 |
| | ՀՎՀՀ 06108036 |
| Համայնքի ղեկավար Մ. Վարագյան | Տնօրեն Լ. Հարությունյան |
| /ստորագրություն/ | |
| Կ.Տ. | Կ.Տ. |